ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵԼԻՆԵ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռոբերտ Նիկոլայի Ազարյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մնացական Միքայելի Մանուկյան** մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ **Լիլիթ Հայկարամի Սարատիկյան**
Առաջատար կազմակերպություն՝	Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021թ. դեկտեմբերի 16-ին՝ ժամը 12^{00}-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. հոկտեմբերի 25-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ինչպես աշխարհի մի շարք երկրներում, որտեղ ներառական կրթության համակարգը զարգացած է (ԱՄՆ, Կանադա, Իսրայել, Գերմանիա, Ֆինլանդիա, Ռուսաստան, Շվեդիա), այնպես էլ Հայաստանի կրթական համակարգում, որում այն դեռևս զարգացման և բարելավման փուլում է, մեծ կարևորություն և դերակատարություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթման, դաստիարակման և հասարակության մեջ ներառման հիմնահարցը:

Հասարակության մեջ սոցիալ-տնտեսական վերափոխումները, մանկավարժական կրթության համակարգի բարեփոխումները, վերակազմավորումը, յուրաքանչյուր երեխայի կրթություն ստանալու իրավունքի առանձնակի կարևորումը, երեխայի կարողություններին համապատասխան կրթություն ստանալը պարտադիր և անհրաժեշտ շեշտադրում են կատարում ներառական կրթության համակարգում, որպեսզի ստեղծվի, մշակվի ու կատարելագործվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կրթություն և դաստիարակություն ստանալու ուղիները:

Հետևաբար այդ հիմնախնդրի կատարելագործման ժամանակակից փուլում հատկապես կարևոր նշանակություն է ձեռք բերում դպրոցներում աշակերտների շտկողազարգացնող աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը: Սակայն նմանատիպ հիմնախնդրի տեսական և գործնական անբավարար մշակվածությունն էապես բարդացնում է դպրոցներում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսուցման, շտկման և զարգացման, ինչպես նաև մանկավարժական մոտեցումների կազմակերպման ու անցկացման աշխատանքները (M. Ainscow, 2007; Н.Н. Малофеев, 1997, 2009; Т.Ф. Вострокнутова, А.С. Сунцова, 2009; P. E. Bourke, 2010; Н.С. Грозная, 2011; T. Brandon, J. Charlton, 2011; Ռ.Ն, Ազարյան, 2012; А.С. Сунцова, 2013; Ա.Վ. Ավագյան, 2014; Ф.Л. Ратнер, 2014; А.И. Никифоров, 2015; Ն.Ռ. Ասատրյան, 2015):

Ուստի ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների կարողությունների ու հմտությունների զարգացման արդյունավետ միջոցների, մեթոդների և պայմանների ուսումնասիրումն ու փորձագիտական մշակումը կնպաստեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների արդյունավետ զարգացմանը, կրթմանն ու դաստիարակմանը, ինչն էլ որոշում է ուսումնասիրվող հիմնախնդրի արդիականությունը:

Հետազոտության արդիականությունը կարևորվում է նաև հետևյալ փաստով՝ ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2014թ. դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում կատարած փոփոխությամբ՝ հաստատելով համընդհանուր ներառականության անցումը, համաձայն որի մինչև 2025թ. ՀՀ յուրաքանչյուր դպրոց պետք է դառնա ներառական կրթություն իրականացնող հաստատություն:

Հետևաբար ՀՀ հիմնական դպրոցներում մեծ կարևորություն ունի ներառական կրթության արդյունավետ և որակյալ ներդրումն ու կառավարումը:

Վերոնշյալն էլ որոշում է ուսումնասիրվող հիմնահարցի արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները և մշակել դրանց կատարելագործման տեսական և գործնական ուղիները:

Հետազոտության օբյեկտը Ներառական կրթության կառավարման գործընթացն է:

Հետազոտության առարկան է՝ Ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները ՀՀ հիմնական դպրոցում:

Հետազոտության գիտական վարկածը: ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման աշխատանքները կլինեն արդյունավետ, եթե՝

- բարձրացվեն ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների ղեկավար կազմի (տնօրեններ, փոխտնօրեններ), ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի աշխատակիցների իրազեկվածության մակարդակն ուսումնասիրվող հարցերի շուրջ,
- հաշվի առնվեն հատուկ գրականության ուսումնասիրման արդյունքում ներկայացված առաջատար մոտեցումները ներառական կրթության կառավարման գործընթացում,
- կիրառվեն ներառական կրթության կառավարման կատարելագործման առաջարկվող տեսական հիմնավորումները (ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող),
- ներկայացվեն ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների մասնագետների փոխգործունեության ուղիները:

Հետազոտության խնդիրները.

1. Ուսումնասիրել ներառական կրթության կառավարման ժամանակակից մոտեցումները, օրենսդրական դաշտը՝ իրավական հիմնավորումը, տեսական և մասնագիտական նախադրյալները,
2. Վերլուծել ՀՀ-ում ներառական կրթության կառավարման դրվածքը,
3. Մշակել ներառական կրթության կառավարման բարելավման տեսական և գործնական ուղիները (ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող):

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- ներառական կրթության առաջատար մասնագետների և գիտնականների տեսությունները, մոտեցումները և կրթության հումանացման գործընթացի գիտական դրույթներն ու սկզբունքները (R. DeCarvalho, 1991; C. Rogers & H. J. Freiberg 1991; N. Gage & D. Berliner, 1994; J. Buli-Holmberg, S. Jeyaprathaban, 2016),
- փոխհատուցման տեսության (L.S. Vygotsky, 1993; B. Gindis, 1995; M.J. Guralnick, 2005),
- ազգային և միջազգային իրավական ակտերը, կրթության իրավունքի վերաբերող փաստաթղթերը, ներառական կրթությանը վերաբերող օրենսդրական դաշտը,
- համապատասխան ուղղությամբ մասնագետների կողմից իրականացված հետազոտություններից ստացված արդյունքները, գիտական սկզբունքները ու դրույթները ներառական կրթության և կառավարման վերաբերյալ (А.И. Зильберштейн, 1963; Э.М. Кафьян, 2002, 2008; R. Kershner, P.T. Farrell, 2009; Ռ.Ն. Ազարյան, 2012; Ա.Վ. Ավագյան, 2014; Մ.Ռ. Հարությունյան, 2014; Ա.Հ. Սվաջյան, 2015; M.A.Grigoryan, 2016):

Հետազոտության մեթոդները.

- ազգային, ռուսական և արտասահմանյան/ամերիկյան, եվրոպական/ մասնագիտական գրականության ուսումնասիրություն և տեսական վերլուծություն,

● ներառական կրթության կառավարման աշխատանքների առաջատար փորձի ուսումնասիրություն և վերլուծություն,

● հոգեբանամանկավարժական հետազոտման մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, անկետավորում,

● մաթեմատիկական վիճակագրական։

Հետազոտության գիտական նորույթը

● Ուսումնասիրվել և վերլուծվել է ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման աշխատանքների դրվածքը։

● Ուսումնասիրվել է ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների ղեկավար կազմի, ուսուցիչների, բազմամասնագիտական թիմի աշխատակիցների, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բարձր կուրսերի ուսանողների՝ որպես ապագա մասնագետների, իրազեկվածությունը ներառական կրթության կառավարման վերաբերյալ։

● Մշակվել է՝

1. աշակերտների անհատական ուսուցման պլանի իրագործման հիմնական ուղիները։
2. ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների հիմնական դրույթների կանոնակարգը,
3. ներառական կրթության կառավարման օրինակելի մոդելը ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների համար,
4. ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների մասնագետների փոխգործունեության կառավարման կառուցվածքը, ուղիները, ձևերը և օրինակելի բովանդակությունը,

Հետազոտության տեսական նշանակությունը: Սույն հետազոտության շրջանակում մասնագիտական գրականության և գիտամեթոդական աղբյուրների ուսումնասիրության արդյունքներով հստակեցված է ներառական կրթության արդյունավետ կառավարմանն առաջարկվող մեխանիզմների, միջոցների և դրանց կիրառման տեսական հիմնավորումը: Աշխատանքի տեսական նշանակությունը նաև նրանում է, որ հետազոտության արդյունքները, բովանդակությունը, հետևությունները կլրացնեն ներառական կրթության կառավարման տեսությունը, ընդհանուր և հատուկ մանկավարժությունն ու հոգեբանությունը տեսական նոր տվյալներով։

Հետազոտության գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել հանրակրթական ոլորտի բարեփոխման գործընթացում և խթանել ներառական կրթության արդյունավետ կառավարման մեխանիզմներին և դրանց կիրառման պայմաններին։

Հետազոտության գործնական նշանակությունը հատկապես արտացոլվում է ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա մշակված մոտեցման միջոցով, որը կարող է օգտակար լինել հանրակրթության ոլորտի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների, կրթության քաղաքականություն, կրթական ծրագրեր մշակողների, կրթության կառավարիչների, մանկավարժների, վերապատրաստողների, հետազոտողների և այլ շահագրգիռ կողմերի համար։

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. Ներառական կրթության կառավարման աշխատանքներն ունեն մի շարք բացթողումներ՝ բացակայում են տեսական և գործնական մեթոդական մոտեցումները ներառական կրթության գործընթաց իրականացնող ՀՀ հիմնական դպրոցներում: Այդ

աշխատանքները կազմակերպվում և անցկացվում են մեթոդական, գիտական ու փորձարարական ճանապարհով չհիմնավորված արդյունքների հիման վրա, բացակայում է դպրոցի ղեկավար կազմի, համապատասխան առարկաների ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի աշխատակիցների համագործակցային կապը:

2. Մշակվել են ներառական կրթության կառավարման օրինակելի կաղապար, մեխանիզմներ, մեթոդներ և դրանց կիրառման պայմաններ, որոնց միջոցով արդյունավետորեն կիրագործվի ներառական կրթության կառավարման գործընթացը, ինչպես նաև կնպաստի դրանց համաչափ զարգացմանը:

Հետազոտության հավաստիությունն ապահովված է հետազոտության տեսական հիմնավորմամբ, մեթոդների համալիր օգտագործմամբ, որոնց համարժեքությունը հաստատված է հետազոտության առարկային, նպատակին և խնդիրներին վերաբերող տեսական եզրահանգումներով, անցկացված հետազոտության երկարատևությամբ և մասշտաբով, ինչպես նաև հետազոտության արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության հիմնական դրույթները, արդյունքներն ու հետևությունները քննարկվել են Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի նիստերում, ներառական կրթության գործընթաց իրականացնող միջնակարգ և հիմնական դպրոցների 2015-2016թթ. մանկավարժական խորհրդի նիստերում (ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կ. Մելիքսեթյանի անվան և ՀՀ Արմավիրի մարզի Հացիկի Ավ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցներում) և մի շարք գիտական և գործնական գիտաժողովներում՝ «Ներառական կրթություն. Ժամանակակից խնդիրներն ու մարտահրավերները» (2015թ., Երևան), «Դերերն ու փոխազդեցությունները ներառական կրթության գործընթացում» (2018թ., Սոֆիա), «Հատուկ կրթություն և ներառական կրթություն» (2019թ. Ուլու), «Հետազոտություններ կրթության, դասավանդման և ուսուցման ոլորտում» (2019թ., Փարիզ), «Ուսումասիրելով կրթությունը, բարելավելով ուսումնառությունը» (2019թ. Կոպենհագեն) և այլն:

Հետազոտության տեսական և գործնական դրույթների հավաստիությունն ու հիմնավորվածությունն ապահովված են նաև հրատարակված նյութերի քանակով, 2012-2020թթ.-ին հետազոտությունների արդյունքների քննարկումներով:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը ներկայացված է 140 համակարգչային էջում, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:
Ատենախոսության տեքստը պարունակում է 3 աղյուսակ, 8 գծապատկեր, 4 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու դրանից բխող խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, հետազոտության տեսական ու գիտական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները և կազմակերպումը» խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից, որտեղ ընդհանուր առմամբ բնութագրվում է՝ ինչ է իրենից ներկայացնում ներառական կրթությունը, ինչպիսի կայացման և զարգացման ուղի է անցել ՀՀ-ում, ինչպես նաև ուսումնասիրվել և ներկայացվել է ներառական կրթության կառավարման հիմնախնդիրը և ուսումնասիրվածության մակարդակը մասնագիտական գրականության մեջ:

Մասնավորապես ընդգծված է, որ ներառական կրթությունը ենթադրում է փոփոխություն՝ լինելով շարունակական գործընթաց, որում բարձրացնում է աշակերտների ուսուցման և մասնակցության մակարդակը, քանի որ այն տեղի է ունենում այն պահին, երբ սկսվում է աշակերտների մասնակցության խթանման ու ներգրավման գործընթացը:

Առաջին ենթագլխում՝ **«Ներառական կրթության հասկացությունը, էությունը և բնութագրումը»**, քննարկվում և ներկայացվում են ներառական կրթության էությունը, գաղափարախոսությունը, ինչպես նաև «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ» տերմինաբանությունը, ներառական կրթությանը վերաբերող արդյունավետ մոտեցումները, որին հնարավոր է հասնել ազգային ռազմավարության և քաղաքականության ձևավորման միջոցով:

Երկրորդ ենթագլուխը՝ **«Ներառական կրթության կայացումը և զարգացումը Հայաստանում»**, նվիրված է Հայաստանում ներառական կրթության ոլորտի կայացմանը և զարգացմանը, ինչպես նաև կարգավորմանն ուղղված մի շարք ներպետական և միջազգային իրավունքի աղբյուրների: Այս ենթագլխում քննարկվում են ներառական կրթության ոլորտում առաջնային դերակատարություն ունեցող ազգային և միջազգային կառույցների գործունեությունը, ուսումնասիրվող հիմնախնդրի լուծումը խթանող միջազգային պայմանագրերն ու հռչակագրերը, ինչպես նաև ՀՀ-ում ներդրված ազգային փորձը՝ ոլորտը կարգավորելու գործում:

«Ներառական կրթության կառավարման հիմնախնդիրները և դրանց ուսումնասիրվածությունը գիտամեթոդական գրականության մեջ» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացվում են ուսումնասիրվող հիմնախնդրի լուսաբանվածությունը, ինչպես նաև ներառական կրթության վերաբերող հետազոտությունների վերլուծությունները՝ ընդգծելով ներառական կրթության արդյունավետ կազմակերպելու կարևորությունը՝ որպես կառավարման առանձնահատկություն:

«Հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրները, մեթոդները և անցկացման փուլերը» խորագրով չորրորդ ենթագլխում հիմնավորված են հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրները, մեթոդները, համաձայն որի ներկայացված հիմնախնդիրն արդիական է, սակայն ոչ լիարժեք ուսումնասիրված մեր երկրում, որն էլ դժվարացնում է ներառական կրթության գործընթացի կազմակերպման և կառավարման արդյունավետ իրականացման ընթացակարգը: Հետևաբար հիմնախնդրի

ուսումնասիրումը հնարավորություն կտա ձգտել ու հասնել համապատասխան աշխատանքների դրվածքի բարելավմանը: Նշված ենթագլխում նկարագրված է նաև հետազոտության իրականացման երեք փուլը՝ որոնողական, փորձարարական, ընդհանրացնող:

Երկրորդ գլուխը՝ «ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքի ուսումնասիրում», բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ բնութագրվում և քննարկվում են ՀՀ ներառական կրթության կառավարման դրվածքի օրենսդրական և իրավական հենքի ուսումնասիրությունը և վերլուծությունը, ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքը, ինչպես նաև ներառական կրթության կառավարման վերաբերյալ դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների, դասղեկների, բազմամասնագիտական թիմի աշխատակիցների, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բարձր կուրսերի ուսանողների իրազեկվածության մակարդակն ուսումնասիրող հարցերը:

Առաջին ենթագլխում՝ **«Ներառական կրթության կառավարման օրենսդրական և իրավական կարգավորումները ՀՀ-ում»** խորագրով, շարադրվում է ՀՀ ներառական կրթության կառավարման դրվածքի օրենսդրական և իրավական հենքի ուսումնասիրությունը և վերլուծությունը, ՀՀ դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքը, ինչպես նաև ներառական կրթության կառավարման վերաբերյալ դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, ուսուցիչների, դասղեկների, բազմամասնագիտական թիմի աշխատակիցների, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բակալավրիատի 3-րդ և 4-րդ ու մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների իրազեկվածության մակարդակն ուսումնասիրող հարցերը:

Ուսումնասիրելով ներառական կրթության իրականացման, կայացման ընթացքը՝ կարելի է փաստել, որ մի կողմից տարեցտարի մշակվում և բարելավվում, կատարելագործվում է ներառական կրթության իրավական դաշտը, իսկ մյուս կողմից նկատվում է, որ բացակայում են ներառական կրթության կառավարման դաշտին վերաբերող իրավական, օրենսդրական փաստաթղթեր, որոնք ամբողջովին կկարգավորեին և արդյունավետ կդարձնեին համապատասխան համակարգի կառավարումը, հնարավոր կդառնար արդյունավետ կազմակերպել, իրականացնել, հսկել ներառական կրթության բոլոր բաժինները՝ ուսումնական, դաստիարակչական, շտկողազարգացնող և այլն:

«ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքի վերլուծություն» խորագիրը կրող երկրորդ ենթագլխում ներկայացված է ներառական կրթության կառավարման դրվածքի վերլուծությունը: Հետազոտությունն անցկացվել է Երևանի, Արմավիրի, Արագածոտնի, Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի ներառական կրթության գործընթաց իրականացնող 57 դպրոցում:

Ամփոփված է վերոնշյալ դպրոցներում ուսումնական, դաստիարակչական, զարգացնող աշխատանքների կազմակերպման, կառավարման և անցկացման գործընթացների դիտումների արդյունքները:

Ներառական կրթության կառավարման դրվածքի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ուսուցման կազմակերպման, դաստիարակման գործընթացները բնականաբար իրականացվում են, սակայն հստակ ներառական կրթության կառավարմանը վերաբերող աշխատանքներ՝ գրեթե ոչ:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ հարցվողների մեծամասնությունը (65.2%) համարում էր ներառական կրթության կառավարման աշխատանքը բավականին կարևոր, սակայն միայն 82.4% դպրոցների հարցվող տնօրեններ, 62.6% փոխտնօրեններ, 59.2% դասղեկներ և 63.8% ուսուցիչներ և դասվարներ, 58.3% բազմամասնագիտական թիմի աշխատակիցներ բավարար և դրական են գնահատել իրենց կողմից իրականացվող աշխատանքը հետազոտվող հիմնախնդրի վերաբերյալ (Աղյուսակ 1.):

Աղյուսակ 1.

Ներառական կրթության կառավարման աշխատանքների դրվածքի գնահատման ցուցանիշները

Հետազոտության մասնակից	Հետազոտության արդյունքներ					
	դրական և բավարար		անբավարար		դժվարացել են պատասխանել	
	N	%	N	%	N	%
1	2	3	4	5	6	7
Տնօրեն n=57	47	82.5	6	10.5	4	7.0
Փոխտնօրեն n=107	67	62.6	30	28.0	10	9.4
Դասղեկ n=49	29	59.2	10	20.4	10	20.4
Ուսուցիչ և դասվար n=94	60	63.8	20	21.2	14	15.0
Բազմամասնագիտական թիմ n=84	49	58.3	22	26.3	13	15.4
Միջին ցուցանիշ	50	65.2	17	21.4	10	13.4

Երրորդ ենթագլխում՝ **«Ներառական կրթության կառավարման վերաբերյալ դպրոցների աշխատակիցների իրազեկվածության մակարդակի ուսումնասիրում»**, քննարկվում են ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների աշխատակիցների իրազեկվածության մակարդակը ներառական կրթության կառավարման աշխատանքների շուրջ: Տվյալների վերլուծությունը վկայում է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար ուսուցման կազմակերպման, դաստիարակման գործընթացներն իրականանում են, սակայն ներառական կրթության կառավարման աշխատանքները գրեթե չեն իրականանում:

Ուսումնասիրությանը մասնակցել է 391 հարցվող՝ 57 տնօրեն, 107 փոխտնօրեն, 49 դասղեկ և 94 ուսուցիչ և դասվար, 84 բազմամասնագիտական թիմի աշխատակից, որից 234-ի (59.8%) կարծիքով գերազանց և դրական են վերաբերում ներառական կրթության գործընթացին, իսկ 28 (7.2%)-ը՝ բավարար, այն դեպքում, երբ 31 (7.9%) հարցվող ներառական կրթության կառավարման վերաբերյալ ունի բացասական կարծիք: Հարցվողներից 60-ը՝ (15.3%) չկարողացան տալ հստակ պատասխան ներառական կրթության կառավարման հարցերի շուրջ: Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բակալավրիատի 3-րդ և 4-րդ նաև մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների մոտ ուսումնասիրվող հարցերի շուրջ իրազեկվածության մակարդակը համեմատաբար ցածր էր (Տրամագիր 1.):

Տրամագիր 1. Ներառական կրթության և ներառական կրթության կառավարման հարցերի վերաբերյալ հարցվողների իրազեկվածության մակարդակի ցուցանիշներ



«Ներառական կրթության կառավարման բարելավման տեսական մոտեցումները և գործնական ուղիները» խորագիրը կրող երրորդ գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Այս գլխում ներկայացվում են ներառական կրթության կառավարման բարելավման անհրաժեշտության տեսական հիմնավորումը, կառավարման պայմանը և ներառական կրթություն իրականացնող հիմնական դպրոցների մասնագետների փոխգործունեության կառավարման հիմնական ուղղությունները,՝ որպես ներառական կրթության կառավարման առանձնահատկություն, ինչպես նաև աշակերտների անհատական ուսուցման պլանի կառավարման ուղիները ՀՀ ներառական կրթության համակարգում:

Առաջին ենթագլխում՝ **«Հիմնական դպրոցի ներառական կրթության կառավարման բարելավման անհրաժեշտության տեսական հիմնավորումը»,** մանրամասն ներկայացվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության և դաստիարակության աշխատանքների իրականացումը, որոնք տեղի են ունենում, ըստ էության, տարաբնույթ պայմաններով և ձևերով (նախապես պլանավորված, տարերային, չհսկվող և այլն) և առաջնորդվում են հիմնականում հետևյալ նպատակով՝

- Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքի արդյունավետության ապահովում,
- Շտկողազարգացնող աշխատանքների արդյունավետ կազմակերպման և իրականացման պայմանների ստեղծում այն աշակերտների համար, ովքեր ունեն տեսողության, լսողության, ինտելեկտի, խոսքի և այլ հապաղումներ:

Հատուկ մասնագիտական գրականության վերլուծությունը և ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, առարկայական ուսուցիչների, հատուկ մանկավարժների աշխատանքային փորձի դիտարկումը վկայում է ներառական կրթության և դաստիարակության մի շարք հարցերի, խնդիրների կառավարման տեսական և գործնական անբավարար մշակվածության մասին: Բացակայում են մշակված տեսական և գործնական միջոցներ, մեթոդական առաջարկներ, որոնք պետք է ուղղված լինեն պայմանների ստեղծմանը, կառուցվածքների,

բովանդակության տարբեր բաժինների աշխատանքի կառավարմանը, ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցում ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների, ինչպես նաև աշակերտների մանկավարժահոգեբանական աջակցության գործունեության, այս կամ այն աստիճանի զարգացման հապաղումներ ունեցող աշակերտների ընտանիքներին աջակցության ցուցաբերմանը: Այդ դպրոցներում անցկացվող աշխատանքի կառավարման գործընթացը հիմնականում իրականացվում է տնօրենների, փոխտնօրենների, դասղեկների, հատուկ մանկավարժների գիտելիքների և անձնական փորձի հիման վրա:

Միանշանակ բազմամասնագիտական թիմի գործունեության կառավարման պլանավորման ժամանակ պետք է հաշվի առնել մասնագիտական գործունեության մեջ ընդհանուր արժեքային առանձնահատկություններ և ուղենիշներ՝ կապված այս կամ այն զարգացման հապաղումներով աշակերտներին դպրոցական միջավայր ներառելու հարցում, մասնավորապես՝

1. Մասնագիտական և անձնային օժանդակություն միմյանց նկատմամբ,
2. Աշխատանքում միասնական, մեթոդաբանական մոտեցում ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների շրջանում,
3. Աշխատանքի տարբեր փուլերում սերտ համագործակցում, միմյանց փոխլրացում աշակերտի և իր ընտանիքի մոտեցման հարցում,
4. Դպրոցում կառավարման օղակների ձևավորման կառուցվածք և հերթականություն,
5. Գործընթացների կազմակերպման կարողություններ և հերթականություն:

Վերը շարադրվածի հետ կապված անհրաժեշտ է որոշել՝

- Տվյալ դպրոցում կառավարման ինչպիսի օղակներ են գործում,
- Ինչպիսին են կառավարչական գործառույթային կապերը,
- Արդյոք գործում են համապատասխանաբար հաստատված դրույթները:

Սրանցից յուրաքանչյուրը տարաբնույթ է, ունի տարբեր բաղադրիչներ, սակայն ուղղված է մեկ նպատակի, այն է՝ ապահովել կրթություն ստանալու հնարավորություն զարգացման տարբեր հապաղումներով աշակերտների համար՝ համապատասխանաբար առանձնացնելով կրթական, կազմակերպական, շտկողազարգացնող կառավարման մոդելներ, ինչպես նաև կառավարման այդ մոդելների համակցում:

Հաշվի առնելով վերը նշված յուրաքանչյուր առանձնահատկություն՝ մշակվել է դրույթների կանոնակարգ՝ տեսական մոտեցումների և ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող աշխատանքների կառավարման գործնական ուղիների կատարելագործման, աշակերտների մանկավարժահոգեբանական աջակցության գործունեության և իրենց ուսումնառության, դաստիարակության և զարգացման հարցերում ընտանիքներին աջակցության ցուցաբերման անհրաժեշտության վերաբերյալ (Գծապատկեր 1.):

Գծապատկեր 1.

Ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի դրույթների կանոնակարգ



Երկրորդ ենթագլխում՝ **«Ներառական կրթության գործընթաց իրականացնող հիմնական դպրոցի կառավարման պայմանները»**, ներկայացված են ներառական կրթության գործընթաց իրականացնող ուսումնական հաստատության դրույթներ կազմելու տեխնոլոգիան, որը պարտադիր պայման է ուսումնական հաստատության յուրաքանչյուր բաժնի աշխատանքի (ուսումնադաստիարակչական, բազմամասնագիտական թիմի գործունեություն) կառավարման օղակի, կառուցվածքի ձևավորման, հերթականության, բոլոր գործընթացների կազմակերպման, կարգավորման, առաջնահերթության համար (Գծապատկեր 2.):

Որպես ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի կառավարման պայման՝ անհրաժեշտ է, որ հաստատությունը համալրված լինի բարձր որակավորում ունեցող առարկայական ուսուցիչներով, հատուկ մանկավարժներով, հոգեբաններով և սոցիալական մանկավարժներով:

Մեծ նշանակություն ունի բազմամասնագիտական թիմի ընտրությունը, քանի որ դպրոցի ուսումնադաստիարակչական, զարգացնող բոլոր աշխատանքների որակն առարկայական ուսուցիչների, աշակերտների ծնողների հետ նրանց կողմից իրականացվող թիմային և միասնական աշխատանքի արդյունքն է:

Ստորև ներկայացվում է Ներառական կրթության կառավարման օրինակելի մոդել՝ հաշվի առնելով հեազոտության ընթացքում ընդգծված առանձնահատկությունները:

Գծապատկեր 2.

Ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի կառավարման օրինակելի մոդել



Երրորդ ենթագլուխը՝ **«Ներառական կրթության գործընթաց իրականացնող հիմնական դպրոցների մասնագետների փոխգործունեության կառավարման հիմնական ուղղությունները»**, նվիրված է ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի յուրաքանչյուր մասնագետի գործունեության կառավարման հիմնական ուղղվածությանն ու առանձնահատկությանը:

Նման փոխգործունեության հիմնական առաջադրանքն է աջակցել զարգացման հապաղում ունեցող աշակերտներին, իրենց ծնողներին, որպեսզի կարողանան հարմարվել նոր միջավայրին, ուսումնական հմտությունների ձևավորմանը, զարգացման խնդիրների վերահսկմանը, շտկման, երկրորդական շեղումների կանխարգելիչ աշխատանքների իրականացմանը, համադասարանցիների շրջանում ներառմանն և այլն:

Առարկայական ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի հատուկ մանկավարժների փոխգործունեության կառավարումն իրականացվում է հիմնականում հետևյալ երեք ուղղությամբ՝

1. Աշակերտների ուսումնառության գործընթացում փոխգործունեություն, որը ներառում է՝

- Աջակցել զարգացման հապաղումներով աշակերտի ուսումնական գործընթացի հիմքերի ձևավորմանը (դասի ընկալում, դասամիջոց, ուսուցչի պահանջներ, աշակերտի գործունեություն և այլն), ուսումնական գործընթացի իրականացմանը և այլն:

● Աշակերտների մոտ ձևավորել իրենց գործողությունները վերահսկելու և դրանց գնահատման կարողություն:

● Զարգացման հապաղումներով աշակերտի աջակցության ռազմավարության կիրառում՝ սկսած մեծ աջակցությունից մինչև չնչին, «Ամբողջ ժամանակ իր հետ» դրույթից մինչ «Կողքին, երբ աջակցության և սատարման կարիք կա» դրույթը, դեպի ամբողջովին ինքնուրույնություն:

● Զարգացման հապաղումներով աշակերտի անհատական ուսուցման պլանի մշակում:

2. Փոխգործունեություն շտկողազարգացնող պարապմունքների և աշակերտի սոցիալականացման գործընթացում, որն ազդում է՝

● Աշակերտի զարգացման հապաղման վերացմանը, շտկմանը, անհատական ուսուցման պլանի մշակմանը:

● Զարգացման հապաղումներով աշակերտի համար շտկողազարգացնող պարապմունքների արդյունավետ միջոցների, մեթոդների, պայմանների ստեղծման ընտրությանը:

● Աշակերտի հետ շտկողազարգացնող պարապմունքների պլանավորմանը, կազմակերպմանն ու իրականացմանը՝ հաշվի առնելով աշակերտի բնավորությունը, զարգացման հապաղման աստիճանը և ձևը:

● Զարգացման հապաղում ունեցող աշակերտի համադասարանցիների շրջանում հարմարեցման, սոցիալականացման գործընթացի համակերպման փոխգործունեության վրա:

● Զարգացման հապաղում ունեցող աշակերտների և համադասարանցիների, ուսուցիչների, այլ մասնագետների միջև շփման կապի ստեղծման աջակցության վրա՝ հաղորդակցական հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով:

3. Զարգացման հապաղում ունեցող աշակերտի ծնողների աշխատանքային գործընթացի փոխգործունեության վրա:

Աշխատանքի հիմնական ուղղվածություններն են՝

● Հատուկ մանկավարժների և ծնողների համագործակցության համակարգում՝ ուղղված կրթական ծրագրերի յուրացմանն և սոցիալականացման աշխատանքներում աջակցության ցուցաբերմանը:

● Տնային պայմաններում ուսումնական նյութի մատուցման միջոցների տրամադրում, աշակերտների և ծնողների միասնական աշխատանքի նշումների մշակում:

● Ներառական կրթության գործընթացում ծնողին աջակցության ցուցաբերում, որպեսզի նա կարողանա գիտակցել իր դերն այս տեսանկյունից:

Այսպիսին են ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի մասնագետների փոխգործունեության կառավարման հիմնական ուղղվածությունը, ձևերը և օրինակելի բովանդակությունը:

Չորրորդ ենթագլուխը՝ **«Աշակերտների անհատական ուսուցման պլանի կառավարման ուղիները ՀՀ ներառական կրթության համակարգում»**, ներկայացվում է Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ընդունակություններին և կարողություններին համապատասխան, ինչպես նաև առողջությանը համարժեք ուսումնական միջավայրում անհատական ուսուցման պլանի /ԱՈՒՊ/ առանձքային քայլերը՝ կարևորելով մի շարք կարևոր գործընթացներ ուղղված

աշակերտի ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող և այլ աշխատանքներին, առաջադիմությանը, ընդհանուր առմամբ ներառման արդյունավետությանը և այլն:

Ներառական կրթության գործընթաց իրականացնող յուրաքանչյուր դպրոցի համար մեծ կարևորություն ունի ԱՈԻՊ-ին վերաբերող աշխատանքները, քանի որ հետազոտությունների արդյունքները փաստում են, որ դպրոցներում ներառական կրթության կառավարման գործում բարդություններ են առաջանում նաև դրա շուրջ, օրինակ՝ յուրաքանչյուր աշխատակցի անմիջական պարտականությունները, աշակերտի ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը և այլն, այնպես էլ ԱՈԻՊ-ի լրացմանը վերաբերող հարցերը:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրած մասնագիտական և գիտամեթոդական աղբյուրների վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել է աշակերտի անհատական ուսուցման պլանի հետևյալ ամբողջական գործընթացը՝ պարունակելով համապարփակ քայլերի հաջորդականություն/դրույթ, որով պիտի անցի յուրաքանչյուր Անհատական ուսուցման պլան՝

1. Աշակերտի զարգացման առաջնային գնահատում
2. Աշակերտի հոգեբանական, ֆիզիկական զարգացման բազմամասնագիտական գնահատում
3. Անհատական ուսուցման պլանի մշակման և գործառույթների բաշխման խմբի ստեղծում
4. Անհատական ուսուցման պլանի մշակում
5. Անհատական ուսուցման պլանի իրականացում
6. Անհատական ուսուցման պլանի մշտադիտարկում, դիտարկում և վերանայում

Ընհանրացնելով ներկայացված դրույթները՝ Անհատական ուսուցման պլանը ներառական կրթության գործընթացում ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ անհատական ուսուցման պլանի միջոցով հնարավոր է դառնում իրականացնել մի շարք կարևոր գործընթացներ ուղղված աշակերտի ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող և այլ աշխատանքներին, առաջադիմությանը, ընդհանուր առմամբ ներառման արդյունավետությանը, առարկայական ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի, ծնողների համագործակցությանը և փոխգործունեությանը, որի արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողները այլևս չեն շարունակի մնալ թերտեղեկացված ներառական կրթության, Անհատական ուսուցման պլանի էության և հիմնական նպատակների մասին:

Այսպիսով, ներառական կրթության կազմակերպման գործընթացի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է հետևյալ գործոններով՝ աշակերտների առանձնահատուկ կրթական կարիքների բացահայտում և մասնագիտական գնահատում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտի կրթական կարիքներին համապատասխան անհատական ուսուցման պլանի մշակում, աշակերտի հետ անմիջականորեն աշխատող մանկավարժական թիմի մասնագիտական բարձր որակ, «բազմամասնագիտական թիմ - առարկայական ուսուցիչներ» համագործակցություն, անհատական ուսուցման պլանների մշակմանը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների ակտիվ մասնակցություն և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հատուկ գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը, մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին՝

1. Ներառական կրթությունը ՀՀ կրթական համակարգի մաս է՝ համապատասխան իրավական, օրենսդրական հիմնավորմամբ. տարեցտարի վերամշակվում և կատարելագործվում է ներառական կրթության իրավական դաշտը: Ներառական կրթության վերաբերյալ կան մի շարք որոշումներ, սակայն արդյունավետ գործելու համար այս փաստաթղթերում բացակայում է ներառական կրթության կառավարման դաշտի վերաբերյալ տեղեկատվություն, որն էլ կարիք ունի մշակման և կատարելագործման: Այս ամենի առկայությունը կնպաստի առավել պատասխանատու, արդյունավետ և որակյալ կազմակերպել, անցկացնել և հսկել ներառական կրթության յուրաքանչյուր բաժին՝ ուսումնական, դաստիարկչական, շտկողազարգացնող:

2. Բացահայտված է ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքը, որի ուսումնասիրման արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր հարցվողները (65.2%) (տնօրեն, փոխտնօրեն, դասղեկ, ուսուցիչ, բազմամասնագիտական թիմի աշխատակից) բարձր են գնահատում այս աշխատանքի կարևորությունը դպրոցում, սակայն ներառական կրթության կառավարման աշխատանքները կարիք ունեն շարունակական բարելավման, կատարելագործման և դեռ կան այս հիմնախնդրի մի շարք չլուծված հարցեր, մասնավորապես մասնագետների կողմից իրականացվող աշխատանքների որակի, արդյունավետության, հետևողականության շրջանակում:

3. Ուսումնասիրված և բացահայտված է ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների տնօրենների, փոխտնօրենների, դասղեկների, ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի աշխատակիցների իրազեկվածության մակարդակը ներառական կրթության կառավարման շուրջ, որտեղ հարցվողների ճնշող մեծամասնությունը համեմատաբար բարձր է գնահատում իրենց տեսական գիտելիքները ներառական կրթության կառավարման հարցերի շուրջ (69.4%-ից մինչև 87.2%), իսկ գործնական կարողությունների շրջանակներում 44% հարցվող տնօրեններ, 39.5% փոխտնօրեններ, 43.6% դասղեկներ, 37.3% ուսուցիչներ և 60% բազմամասնագիտական թիմի աշխատակիցներ կարողացան պատկերացնել ներառական կրթության կառավարման հիմնական դրույթները, անհրաժեշտ փաստաթղթերը, մանկավարժական խորհրդում քննարկվելիք հարցերը և այլն:

4. Ատենախոսության մեջ ներկայացված են ներառական կրթության կառավարման բարելավման տեսական մոտեցումները և գործնական ուղիները՝

- Դպրոցի ներառական կրթության կառավարման կատարելագործման անհրաժեշտության տեսական հիմնավորումը,
- Ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցի կառավարման պայմանները,
- Ներառական կրթության գործընթաց իրականացնող դպրոցների մասնագետների փոխգործունեության կառավարման հիմնական ուղղությունները,
- Աշակերտների անհատական ուսուցման պլանի կառավարման ուղիները ՀՀ ներառական կրթության համակարգում:

5. Հետազոտության արդյունքների հիման վրա մշակված մոտեցումները՝ ուղղված ներառական կրթության կառավարմանը, ներկայացվել, քննարկվել և ներդրվել են ներառական կրթության գործընթաց իրականացնող ՀՀ Լոռու մարզի Արևածագի Կ. Մելիքսեթյանի անվան և ՀՀ Արմավիրի մարզի Հացիկի Ավ. Բաղդասարյանի անվան միջնակարգ դպրոցներում: Դպրոցներից ստացել ենք դրական կարծիքներ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատություններում՝

1. Գրիգորյան Մ. Ա., Ընտանիքի դերն առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման գործում, «Մանկավարժություն և հասարակական գիտություններ» բանբեր 2(29), «Լինգվա» հրատարակչություն, Երևան- 2013; էջ 60-72:
2. Գրիգորյան Մ. Ա., Ներառական կրթությանը մեթոդաբանական մոտեցում, «Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները» գիտաժողովի նյութեր, «Գրիգոր Տաթևացի» հրատարակչություն, Երևան- 2014; էջ 37-40:
3. Grigoryan M. A.,The Impact of Non-Formal Education on Children with Special Educational Need, «Способы и формы организации неформального образования для разновозрастных сообществ в условиях развития национальных образовательных систем в СНГ», Федеральное государственное научное учреждение «Институт педагогического образования и образования взрослых Российской академии образования», сб.научных статей / под общ. ред. М. С. Якушкиной, М. Р. Илакавичус –СПб.: ФГНУ ИПООВ РАО, Санкт-Петербург - 2014; стр. 141-145.
4. Ազարյան Կ. Ա., Գրիգորյան Մ. Ա., Уровень информированности студентов педагогических вузов в вопросах управления инклюзивным образованием, «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ N.1, Երևան - 2015; էջ 191-195:
5. Գրիգորյան Մ. Ա., Մանկավարժների մասնագիտական պատրաստականությունը որպես ներառական կրթության կառավարման հիմնախնդիր, «Հատուկ կրթության հիմնախնդիրներ» Գիտամեթոդական հանդես, N. 3, Երևան - 2015; էջ 36-44:
6. Grigoryan M. A., How to Manage an Inclusive Classroom Efficiently? Специальное образование: Традиции и инновации, Материалы V Международной научно-практической конференции, УДК 376 ББК 74.3, С718 Минск – 2016; стр. 28-30.
7. Ազարյան Ռ. Ն., Գրիգորյան Մ. Ա., Ներառական կրթության կառավարման հիմնախնդիրները և դրանց ուսումնասիրվածության մակարդակը գիտամեթոդական գրականության մեջ, Հատուկ կրթության հիմնախնդիրներ, Գիտամեթոդական հանդես N.4, Երևան - 2016; էջ 28-36:
8. Գրիգորյան Մ. Ա., ՀՀ հանրակրթական դպրոցներում ներառական կրթության կառավարման վերլուծություն և իրազեկվածության ուսումնասիրում, Հայկազեան հայագիտական հանդես, Բեյրութ – 2016; էջ 603-614:
9. Գրիգորյան Մ. Ա., Անհատական ուսուցման պլանի կառավարման ուղիները ՀՀ ներառական կրթության համակարգում, «Կրթության կառավարում» բանբեր 2(37), «Լինգվա» հրատարակչություն, Երևան - 2016; էջ 32-47:
10. Grigoryan M. A., Teaching Staff Professional Development in the Context of Inclusive Education, International Academy Journal Web of Scholar. 2(32). doi:

10.31435/rsglobal_wos/28022019/634 RS Global Sp. z O.O., Scientific Educational Center, Warsaw - 2019; p. 14-17.

11. Grigoryan M. A., Inclusive Education Management Peculiarities at Public Schools in Republic of Armenia, International Conference on Research in Education, Teaching and Learning, ICETL 340, Paris, 2019; p. 31-39

ГРИГОРЯН МЕЛИНЕ АРЦРУНОВНА

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ ИНКЛЮЗИВНЫМ ОБРАЗОВАНИЕМ В ОСНОВНОЙ ШКОЛЕ РА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01 “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 16 декабря 2021г. в 12^{00} на заседании специализированного совета по педагогике 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меца 17.

Актуальность исследования. В ряде стран мира, в которых развита система инклюзивного образования (США, Канада, Израиль, Германия, Финляндия, Швеция, Россия), особую значимость и роль придают образованию, воспитанию и адаптации в общество детей, нуждающихся в особых условиях образования. И хотя образовательная система Армении находится на стадии развития, она не обойдена вниманием и в нашей республике.

На современном этапе совершенствования системы специального и инклюзивного образования особое значение приобретает эффективная организация и управление коррекционно-развивающими работами. Однако недостаточная теоретическая и практическая разработанность этой проблемы существенно осложняет совершенствование работ по обучению, коррекции и развитию детей, нуждающихся в особых школьных условиях. (M. Ainscow, 2007; Н.Н. Малофеев, 1997, 2009; Т.Ф. Вострокнутова, А.С. Сунцова, 2009; P. E. Bourke, 2010; Н.С. Грозная, 2011; T. Brandon, J. Charlton, 2011; А.С. Сунцова, 2013; Ф.Л. Ратнер, 2014; А.И. Никифоров, 2015):

Следовательно, изучение и разработка средств, методов и условий совершенствования управления инклюзивным образованием будут способствовать эффективному развитию, образованию и воспитанию учашися, нуждающихся в особых условиях образования.

Актуальность исследования подчеркивает и тот факт, что рещением Национального Собрания РА 2014 года к 2025 г. каждая школа в Армении должна стать учреждением, реализующим инклюзивное образование.

Вышеуказанное и определяет актуальность изучаемой проблемы, её теоретическую и практическую значимость.

Цель исследования: изучить особенности управления инклюзивным образованием в основных школах Республики Армения, разработать теоретическихе и практические пути их совершенствования.

Задачи исследования:

1. Исследовать современные подходы к управлению инклюзивным образованием, законодательное поле, правовое обоснование, теоретические и профессиональные предпосылки;
2. Изучить постановку управления инклюзивным образованием в Армении;
3. Разработать теоретические и практические пути совершенствования инклюзивного образования;

Научная новизна исследования:

- изучен текущий расклад в управлении инклюзивным образованием в Республике Армения;
- изучен уровень информированности в рассматриваемых вопросах руководящего состава школ, учителей, старшекурсников и магистрантов Армянского государственного педагогического университета им.Х.Абовяна как будущих специалистов;
- разработан устав основных положений, и примерная модель управления инклюзивным образованием, содержание, пути и формы управления процессом сотрудничества специалистов, осуществляющих инклюзивное образование в школах при индивидуальном обучении учеников.

Теоретическая значимость исследования определяется теоретическим обоснованием эффективности рекомендованных подходов в совершенствовании инклюзивного образования и теоретическим обоснованием полученных результатов исследования.Теоретическая значимость работы заключается и в том, что результаты и выводы исследования восполнят теорию управления инклюзивным образованием, а также общую и специальную педагогику и психологию – новыми теоретическими данными.

Практическая значимость исследования. Результаты исследования могут быть внедрены в процессе реформирования общеобразовательной сферы и будут стимулировать выработку эффективных механизмов управления инклюзивным образованием и налаживание условий их применения.

Результаты, исследования и выводы могут быть применены также преподавателями вузов для проведения лекционных курсов и семинаров.

Основные положения, выносимые на защиту:

1. Работа по управлению инклюзивным образованием в республике имеют ряд упущений: налицо отсутствие единообразных теоретических и практических методических подходов в основных школах РА, осуществляющих инклюзивное образование. Эти работы организуются и проводятся, опираясь в основном на личный опыт и знания учителей, а не на современные научно- методические разработки.

2. Образцовый каркас управления инклюзивным образованием, механизмы и методы управления и условия их применения, посредством которых будут эффективно осуществляться управление инклюзивным образованием, а также будут стимулироваться равномерное развитие всех выше указанных направлений.

Структура и объём диссертации. Диссертация представлена на 140 страницах компьютерного текста, состоит из введения, трёх глав, выводов, списка использованной литературы и приложения. Текст диссертация содержит 3 таблицы, 8 диаграмм, 4 приложения.

MELINE ARTSRUN GRIGORYAN

SPECIFICS OF INCLUSIVE EDUCATION MANAGEMENT IN BASIC SCHOOLS OF RA

Dissertation for the Scientific Degree of Candidate of Pedagogical Sciences (PhD) on the speciality 13.00.01 - "Theory of Pedagogy and History".

The defense of the dissertation will take place on December 16, 2021 at 12^{00} at the session of the Special Board 020 on "Pedagogy" SCC (Supreme Certifying Committee) to award scientific degrees at the State Pedagogical University after Kh. Abovyan. Address: 0010 Yerevan, Tigran Mets ave., 17.

SUMMARY

The relevance of the research. The education, upbringing and inclusion of children with special educational needs plays an important role both in countries (the USA, Canada, Israel, Germany, Finland, Sweden, Russia), where the system of inclusive education is well developed and in Armenia, where it is still at a developmental stage.

Socio-economic transformations in society, reforms in the pedagogical education system, organization, the right of every child to education should be emphasized in the system of inclusive education in order to create, develop and improve channels of education and upbringing for students with мspecial educational needs.

The relevance of the study underlines the fact that by 2025 every school in the Republic of Armenia should implement inclusive education, as the transition to general inclusion was approved by the amendment to the RA Law "On General Education" as of December 1, 2006, which was validated by RA National Assembly in 2014.

Therefore, effective and high-quality implementation and management of inclusive education in basic schools of the Republic of Armenia is of great importance.

The objective of the research is to study the specifics of managing inclusive education in basic schools of the Republic of Armenia and develop theoretical and practical ways to improve them.

The following research tasks have been formulated in accordance with the goal, object, subject and hypothesis of the research:

1. To study the modern approaches to the management of inclusive education, the legislative field: legal substantiation, theoretical and professional preconditions,
2. To analyze the management structure of inclusive education in Armenia,
3. To develop theoretical and practical ways to improve inclusive education manage.

The scientific novelty of the research:

- The management structure of inclusive education in basic schools of the Republic of Armenia has been studied and analyzed.
- The awareness level of management staff of schools implementing inclusive education, including teachers, members of the multidisciplinary team, and students of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, as future specialists, was studied.
- The following has been developed: The regulation of the main sections of schools, implementing inclusive education, an exemplary model of inclusive education management for schools, the structure, methods and ways of managing the interaction of school

specialists on inclusive education and exemplary content, the main directions of the individual learning plans of students.

The basic provisions for the defense:

1. Inclusive education management has a number of shortcomings: there are no similar methodological approaches in the basic schools of the Republic of Armenia. These activities are organized and carried out on the basis of methodological, scientific as well as experimental and unsubstantiated results.
2. Exemplary inclusive education management templates, mechanisms, methods and conditions of their application were developed, through which the process of inclusive education management will be effectively implemented and contribute to their balanced development.

Theoretical significance of the research.

The theoretical substantiation of the proposed mechanisms, means and conditions of their application for the effective management of inclusive education was clarified by the professional literature and the results of studies of scientific and methodological sources.

The theoretical significance of the study, the content and findings of the research will complement the theory of inclusive education management, general and special pedagogy and psychology with new theoretical data.

The practical significance of the research.

The research outputs can be applied in the reformative processes of basic education and reinforce the effective management mechanisms of inclusive education at different levels and stages of education.

The practical importance of the current research is especially reflected in the model developed and elaborated based on the results of the research. In general, the research outputs can add value to the development of academic programs, courses and professional training, educational-methodical manuals, textbooks, research works, institutional strategies and other educational and research activities. They can be useful for professionals in the field of general education, education policy makers, curriculum developers, education managers, educators, trainers, researchers, and other stakeholders.

The Structure and Volume of the Dissertation. The dissertation paper comprises an introduction, three chapters, conclusions, list of references and appendices. The volume of the dissertation paper is 140 pages.